ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Գ. Հ. ՍԱՖԱՐՅԱՆ

Կիլիկյան հայկական թագավորությունը, որը տևեց շուրջ երեք դար (1080—1375) հայ մշակույթին տվեց նշանավոր և երևելի գործիչներ։ Նրանց թվում իր արժանի տեղն ունի ականավոր պետական և քաղաքական գործիչ, մեծ զորավար և դիվանագետ, օրենսդիր, օրենսգետ և պատմիչ Սմբատ Սպարապետը (1208—1276)[1]։ Որպես քաղաքական խոշոր գործիչ, նա խորապես մտահոգված էր հայկական պետականության ամրապնդման, ավատատիրական հարաբերությունների իրավական կարգավորման, ֆեոդալիզմի ծայրահեղ կողմերի հարթեցման, ինչպես նաև ավատատիրական օրինականության պահպանման համար։ Կազմելով Կիլիկյան հայկական պետության Դատաստանագիրքը[2], որի հիմքում ընկած է Մխիթար Գոշի Դատաստանագիրքը[3], Սմբատը լուծում է ազգային օրենսգրքի բացակայության հարցը Կիլիկիայում։ Չնայած որ Դատաստանագիրքը «կազմվել է անհատական ջանքերով, այնուամենայնիվ, նա ստանում է տեղական ֆեոդալ հասարակության աչքում պետական-օրենսդրական նշանակություն, վայելում է պետական սանկցիայով անցած կոդեքսի արժեք, որովհետև նրա կազմողը հանդիսանում էր հայ կառավարության մեջ առաջնակարգ դեր խաղացող մի անձ, թագավորի եղբայրը, որը թերևս թագավորի առաջադրանքով էր ձեռնամուխ եղել իր օրենսգրքի հորինմանը»[4]։ Եթե Գոշի Դատաստանագիրքը, գործող օրենսգիրք լինելուց բացի, նաև մի իսկական գիտական տրակտատ է պետության, իրավունքի և օրենսդրության, դատարանի ու դատավարության և հարակից այլ հարցերի մասին, ապա Սմբատի Դատաստանագիրքը «իսկական օրենսգիրք է, դասակարգային բովանդակությամբ՝ ֆեոդալ-ճորտատիրական կոդեքս»[5]։

Սմբատ Սպարապետի իրավաքաղաքական հայացքները ուսումնասիրելու համար կարևոր նշանակություն ունի նաև նրա «Տարեգիրքը»[6], որը կազմելիս Սմբատը օգտվել է տարբեր աղբյուրներից[7]։ «Տարեգիրքը» անգնահա-

---

1 Սմբատ Սպարապետի կյանքի և գործունեության մասին տե՛ս Ա. Գալստյան, Սմբատ Սպարապետ, Երևան, 1961, Ա. Սուքիասյան, Սմբատ Սպարապետը որպես զորավար և դիվանագետ (Բանբեր Երևանի համալսարանի, 1973, № 1, էջ 98—101), նույնի՝ Սմբատ Սպարապետը որպես պատմիչ, օրենսգետ և օրենսդիր (Բանբեր Երևանի համալսարանի, 1974, № 1, էջ 100—109)։

2 Смбат Спарапет, Судебник (այսուհետև՝ Դատաստանագիրք), составление текста, перевод с древнеармянского, предисловие и примечание А. Г. Галстяна. Ереван, 1958.

3 Այս մասին տե՛ս Է. Պիվազյան, Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրքերի առնչակցությունը (Բանբեր Մատենադարանի, № 5, Երևան, 1960, էջ 117—134), Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, աշխատասիրությամբ՝ Խոսրով Թորոսյանի, Երևան, 1975, Առաջաբան, էջ Լե, А. Г. Сукиасян, История Киликийского армянского государства и права, Ереван, 1969, с. 185—192 և այլն։

4 Ե. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, Երևան, 1939, էջ 92։

5 Ա. Սուքիասյան, Սմբատ Սպարապետը որպես պատմիչ, օրենսգետ և օրենսդիր, էջ 108։

6 Սմբատ Սպարապետի Տարեգիրք (այսուհետև՝ Տարեգիրք), Վենետիկ, 1956։

7 Տե՛ս Մանուկ Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 249։

տևրի աղբյուր է Կիլիկյան հայկական թագավորության ներքին և արտաքին քաղաքականության հարցերը պարզաբանելու համար։

Ի տարբերություն միջնադարյան հայ մյուս մտածողների, Սմբատի իրավաքաղաքական հայացքները կրում են շեշտված աշխարհիկ բնույթ, թեպետ նա ևս չէր կարող լիովին ազատ լինել կրոնաաստվածաբանական մտածողությունից։ Այսպես, պետության և թագավորական իշխանության առաջացմանը նա տալիս է աստվածաբանական մեկնաբանություն. «Յառաջ պատեհ համարեցաք զվիճարկեալ դատաւորացն գոել. բան յառաջ զթագաւորացն, վասն զի յԱստուծոյ կարգեցաւ թագաւորութիւնն, եւ յԱստուծոյ տեղին է համարած ի յերկրի»[8]։ Մեկ այլ առիթով Սմբատը նշում է, որ «թագաւորքն յԱստուծոյ են կարգած»[9]։ Թագավորին համարելով աստծու տեղակալը երկրի վրա, նրան օժտված է համարում բոլոր տեսակի բարեմասնություններով և առաքինություններով։ Այսպես, խոսելով Գագիկ Բագրատունու մասին, Սմբատը նշում է, որ նա քաջ էր, «բարետեսիլ և ահարկու, ողորմած և քաղցրը ի վերայ ամենեցուն... և օգնականութեամբն Աստուծոյ զօրացեալ խաղաղացոյց աշխարհն ըստ իւրաքանչիւր կերպի, զեկեղեցականս և զիշխանս, զռամիկս և որ ընդ իշխանութեամբ նորա էին»[10]։ Իսկ Լևոն թագավորի մասին ասում է, որ նա իմաստուն էր «եւ հանճարեղ, զուարթ տեսլեամբ և առատ սրտիւ առհասարակ առ եկեղեցականս և աշխարհականս, առ աղքատս և առ տկարս»[11]։

Պետական կառավարման ձևերից Սմբատը ընտրում է իշխանության կենտրոնացված միապետական ձևը և, ըստ այդմ էլ, միապետին օժտում է բացառիկ իրավասություններով. «Եւ թագաւորն մէն է՝ որ կարէ դեկան շինել՝ եւ քաղաք եւ բերդ՝ եւ մեծ գետոց կանգարայ՝ եւ հոգէտուն ի վերայ մեծ ճամփնի եւ ի կապնի երկրին»[12] կամ՝ «Ոսկէհանքն թագաւորին է, եւ արծաթհանքն ի կէս է ընդ երկրին պարոնն եւ ընդ թագաւորն. եւ երկաթն ու պղինձն ու կլայեկն՝ յորում երկիր գտնուի այնոր է»[13], այնուհետև՝ «Ոսկի եւ ոսկով կտաւ՝ որ ի շահն ուրդի՝ թագաւորին է»[14]։

Ինչո՞վ է պայմանավորված թագավորի անձի այդպիսի մեծարումը և բացառիկ իրավասության շնորհումը։ Սմբատը, տեղյակ լինելով իր ժողովրդի պատմությանը, խորապես գիտակցել է, որ հայկական պետականության կործանման պատճառներից եղել են նախարարական տների կամայականությունները ու կենտրոնախույս ուժերի կործանիչ գործունեությունը, միջֆեոդալական չդադարող կռիվները։ Ընդհանրացնելով իր ժողովրդի պատմությունը, Սմբատը հանգեց իր ժամանակի համար միակ ճիշտ եզրակացությանը. միայն ուժեղ կենտրոնացված թագավորությունը կարող է երկիրը պահպանել կենտրոնախույս ուժերի քայքայիչ գործողություններից և արտաքին թշնամիների ոտնձգություններից։ Ելնելով ուժեղ կենտրոնացված թագավորության շահերից, Սմբատը սահմանում է. «Թէ իշխան կամ այլ ոք՝ որ ի թագաւորի ծառութիւն եւ ի հնազանդութիւն լինի, եւ իրք պատճառ այնէ թագաւորին, հայնց որ մեռնի իրաւնաւք»[15]։ Այս իրավանորմով Սմբատը, նախ. ապահովում է թագավորի անձի անձեռնմխելիությունը և, երկրորդ, նախազգուշացնում է իշխաններին, որ թագավորական իշխանության նկատմամբ ոտնձգության դեպքում, նրանք խստորեն կպատժվեն, և այս տեսա-

---

8 Դատաստանագիրք, էջ 5։
9 Նույն տեղում, էջ 81։
10 Տարեգիրք, էջ 1։
11 Նույն տեղում, էջ 208։
12 Դատաստանագիրք, էջ 9։
13 Նույն տեղում, էջ 13։
14 Նույն տեղում, էջ 12։
15 Նույն տեղում, էջ 15։

կետից վերջիններս թագավորի մոտ ավելին չեն, քան իշխանական կալվածքների իրենց ճորտերը։

Կողմնակից լինելով պետական կառավարման միապետական ձևին, այնուհանդերձ, Սմբատը այն չի հասցնում արևելյան բռնակալության աստիճանի, այլ որոշակի իրավանորմերով սահմանափակում է թագավորի իշխանությունը։ Այսպես, թագավորը իրավասու է զրկելու իշխանական իրավունքից միայն այն իշխանին, որին ինքն է շնորհել այդ իրավունքը. «Եւ իշխան՝ զոր ինք թագաւորն լինին իշխանացուցել, նա ինք կարէ ձգել. երբ ու կամի՝ յիշխանութենէն, եւ խրատել ու այնել զինչ իր պիտի։ Բայց զայլ ինքնակալք, որ ինքեանք չլինին իշխան դրել, նա չկարէ առանց այլ իշխանաց որ իր ընկերք լինին՝ ոչ զնա աքսորել եւ ոչ ձգել»[16]։ Ուրեմն այն իշխաններին, որոնք մինչ արքայի թագադրվելն էին իշխանական տիտղոսի աստիճանի հասել, թագավորը, առանց մյուս ֆեոդալների համաձայնության, իրավունք չունի զրկել օրինական իրավունքներից կամ աքսորել երկրից։ Սմբատը սահմանում է նաև թագավորի ապրելակերպը. «Չէ իրաւունք որ թագաւոր անպսակ սիրղով կենայ. ասու չէ զի Աստուծոյ եւ հայրապետին աւրինադրակից է. թող աւրինաւոր ամուսնանայ»[17]։ Թագավորն իրավասու չէ նաև խառնվելու իշխանների ներքին գործերին. «Մի լիցի թագաւորին յայն ձեռնարկել, այլ իշխանքն զիրենցն ունենան մնացական եւ թագաւորին ուժ տան»[18]։ Սակայն թագավորները պետք է աչալուրջ լինեն և բնի մեջ խեղդեն հպատակների անհնազանդության ամեն մի փորձ։ Այդ առթիվ Սմբատը Կիլիկիայի թագավորներին հիշեցնում է, որ Դագիկը, գահ բարձրանալով, միավորեց «զզօրսն Հայոց, և գնաց ընդ կողմանս աշխարհի հայրենեաց իւրոց, և զանհնազանդսն հնազանդեցոյց, և զհակառակսն հալածեաց»[19]։

Ուրեմն, ըստ Սմբատ Սպարապետի, թագավորը համարվում է երկրի գերագույն կառավարիչը և պետական սուվերենության կրողը։ Դա իր արտահայտությունն է գտել նաև «Տարեգրքում», որտեղ հայոց թագավոր Դագիկը այսպիսի խոսքերով է դիմում Բյուզանդիայի կայսրին. «Ով արքայ, ծանիր, զի ես որդի եմ թագաւորացն Հայոց, և թագաւոր ի վերայ ազգին Հայոց, և ամենայն Հայք հնազանդին ինձ»[20]։

Թագավորական գահի ժառանգման հարցում Սմբատը դրսևորում է առաջադիմական մոտեցում։ Այսպես, թագավորի ընտրության հարցում նա չի կառչում հին սովորութային իրավունքին, որ ընդունված էր հայկական պետականության մեջ, այլ, ելնելով պետական ու հասարակական շահերից, սահմանում է այնպիսի կարգ, որի համաձայն թագավորական գահը պիտի ժառանգի արքայորդիներից արժանավորը. «Եւ թէպէտ ու նոմոսով է՝ զանդրանիկն կացուցանել յաթոռ ինքնակալութեանն, բայց վասն աւգտութեան աշխարհաց իրաւունք է՝ որ աղէկ տեսնու հայրն՝ իր ամէն գաւառաւքն եւ գաւառապետացն տեսովն եւ սուրբ եկեղեցովն, որ՝ յոր հաճին յորդոց թագաւորին եւ գիտնան որ բարի բարուք լինի եւ աստուածասէր ու երկիւղով եւ ըռատակն, նա զայն կացուցանեն յաթոռ ինքնակալութեան հաւրն, որ հովվէ զեզրարքն եւ զերկիրն»[21]։

Ողջ միջնադարում պրոբլեմ դարձած աշխարհիկ և հոգևոր իշխանությունների առաջնության հարցը Սմբատը լուծում է աշխարհիկ իշխանության օգտին, «Յառաջ պատեհ համարեցաք զվիճարկեալ դատաւորացն գրելբան յառաջ զթագաւորացն»[22]։ Նկեղեցին ենթարկելով աշխարհիկ իշխա-

16 Նույն տեղում, էջ 81։
17 Նույն տեղում, էջ 9։
18 Նույն տեղում, էջ 14։
19 Տարեգիրք, էջ 37։
20 Նույն տեղում, էջ 64—65։
21 Նույն տեղում, էջ 7։
22 Դատաստանագիրք, էջ 5։

նութեանը, Սմբատը կարծում է, որ հոգևորականությունը չպետք է զբաղվի աշխարհիկ գործերով. «Զէ ամենեւին պատեհ որ եպիսկոպոս յոչինչ ազգ գործ աշխարհական եւ ոչ ի բան մերձենայ. քան զամէն եկեղեցւոյն եւ զեկեղեցականացն դատստներոյն բաներն ուղղէ ի ճշմարիտն, զի չկարէ ոք երկուց տէրանց ծառայել՝ որպէս հրամայէ Քրիստոս»[23]։ Իսկ մեկ այլ տեղ նա սահմանում է. «երէցն պարտ է որ երբ զայս առնու՝ նա հերիք այնէ. ու այլ մարմնաւոր գործ չայնէ եւ այլ չգիտենայ յաշխարհի բանէն, քան զեկեղեցինն մէն եւ զժամն»[24]։ Չնայած այդ սահմանափակումներին, եկեղեցին հասարակության արտոնյալ դասերից էր և պետության հիմնական հենակետերից մեկը։ Այդ են վկայում Դատաստանագրքի մի շարք հոդվածներ, որտեղ օրենքի ուժով պահպանվում է եկեղեցու արտոնյալ վիճակը, ինքնուրույնությունը և ինչքը։ Այսպես, Դատաստանագրքի 62-րդ հոդվածն ազդարարում է. «ԶԱսաուծոյ երկիւղն եւ զիւր ծանութիւնն հրամայէ աւրէնքս ստանալ՝ ըստ Սողոմոնի։ Ապա թէ եկեղեցական լինի, նա ընդ սուրբ եւ առաքինի կարգաւորացն դասն փարի. եւ թէ աշխարհի երէց է, նա արժան է ընդ հարկեւոր գիտանքն եւ ընդ մատեւորս պարոնութեան ըստ իւրաքանչիւր կերպի յարիլ ի բարին, վասն զի Աստուած զերկնային դաս հրեշտակացն զաստիճանաւորսն արար իւր ի սպասաւորութիւն. եւ զերկրաւորքս նոյնպէս ի տէրութիւն եւ ի պարոնութիւն»[25]։

Ի տարբերություն Մխիթար Գոշի, Սմբատի Դատաստանագրքում որոշակիորեն շեշտված է ավատատիրական հասարակարգի դասային հիերարխիան։ Եթե Մխիթար Գոշը բնական ազատության և հավասարության կողմնակից էր, իսկ մարդկանց անհավասարությունը բացատրում էր տնտեսական պատճառներով[26], ապա Սմբատը ոչ միայն չի ընդունում ի սկզբանե մարդկանց հավասարության գաղափարը, այլև անհավասարությունը համարում է բնական, արդարացի և հավերժական. «Կու հրամայէ աւրէնքս, որ մարդկային ազգս շատ ազգեր են, եւ են, որ ազատք են ու հեծելվորք, եւ են որ չեն՝ եւ յայլ ազգ գործերն որ գործ այնեն»[27]։

Ինչպես միջնադարյան ավատատիրական մյուս հասարակարգերը, այնպես էլ կիլիկյան հասարակությունը ստորաբաժանվում էր «ազատների» և «անազատների», «հարուստների» և «աղքատների», որն իր արտահայտությունն է գտել նաև Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի իրավանորմերում[28]։ Այդպիսի բաժանման հիմքում ընկած էր մարդկանց և՛ տնտեսական դրությունը, և՛ քաղաքական անհավասարությունը։ Ուստի ազատները տնտեսապես և քաղաքականապես ազատ, տիրապետող դասակարգի ներկայացուցիչներն էին։ Նրանք թագավորի գլխավորությամբ կազմում էին ֆեոդալների դասակարգը։ Վերջիններս իրենց ձեռքում էին պահում ավատատիրական սեփականության և արտադրության հիմնական միջոցը՝ հողը, որ օգտագործում էին աշխատավոր գյուղացիությանը՝ «անազատներին» շահագործելու միջոցով։

Իշխող դասակարգը կազմող ազատներն իրենց հերթին բաժանված էին զանազան դասերի՝ աշխարհիկ և հոգևոր, խոշոր, միջին և մանր հողատերերի։ Ավատատերերի հիերարխիայի դասակարգումը իր արտահայտությունն է գտել հատկապես Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի «Վասն թա-

---

23 Նույն տեղում, էջ 24։

24 Նույն տեղում, էջ 76։

25 Նույն տեղում, էջ 64։

26 «Ազատ յԱրարչէն եղեւ մարդկայինս բնութիւն, այլ ծառայել տէրանց յաղագս պիտոյից եղեւ հողոյ և ջրոյ» (Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց իրավաբանական հետազոտութիւնք հանդերձ ծանօթութեամբք Վ. ծ. վ. Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, էջ 320)։

27 Դատաստանագիրք, էջ 148։

28 Տե՛ս Դատաստանագրքի Բ, Ե, ԺԸ, ԿԳ, ԿԶ, ՀԶ և այլ համապատասխան հոդվածները։

գաւորաց, իշխանաց եւ ձիաւորաց, որ ի Հայս ազատ կոչին ի դատաստանաց» հոդվածում, որտեղ մասնավորապես նշված է. «...Եւ զիշխանքն դատէ իշխանաց իշխան՝ իշխանաւքն եւ իրենց տեսովն. նոյնպէս եւ զազատքն՝ որ են ի մերս ձիաւորքն եւ լիճ ճորտերն՝ նա իրենցովն զիրենք դատեն իշխանաց իշխանքն. զթագաւորին ճորտերն՝ թագաւորին հրամանաւքն»[29]։ Ֆեոդալական հիերարխիայի ճնշման ամրողջ ծանրությունն ընկած էր չքավոր ժողովրդի ուսերին։

Տիրապետող դասակարգի մյուս խոշոր դասը հոգևորականությունն էր, որը, ըստ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի «Վասն կենցաղավարութեան կարգաւորաց» հոդվածի, տրոհվում էր ինը կարգերի, որտեղ մտնում էին կաթողիկոս-պատրիարքները, արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները, վարդապետները, քահանաները, սարկավագները և այլք։ Հոգևորականությունը համարվում էր «ազատների» դաս, այսինքն՝ ինչպես աշխարհիկ ավատատերերը, ազատ էր հարկերից։ Տեղին է նշել, որ ոչ միայն կաթողիկոսը, այլև հոգևոր դասի մյուս խոշոր ներկայացուցիչներից շատերը՝ արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ և վարդապետներ, սերում էին իշխանական և ազնվական տոհմերից։ Այդ պատճառով էլ հոգևոր դասը խոշոր և ազդեցիկ խավ էր պետությունում և վայելում էր թագավորների նյութական ու քաղաքական աջակցությունը[30]։

Հասարակության մյուս մասը՝ «անազատների» խումբը, բաղկացած էր ընդհանուրկ խավերից, որը բաժանվում էր. ա) պետական գյուղացիներ, բ) կախյալ գյուղացիներ, գ) պառիկոսներ և դ) ստրուկներ։ Շինականները (պետական և կախյալ գյուղացիները), ըստ Սմբատի Դատաստանագրքի, համարվում էին որոշակի իրավահարաբերությունների սուբյեկտներ, մասնավորապես ունեին իրենց հողամասերը՝ օգտագործման իրավունքով, իսկ «ազատ գյուղացիները» ոչ միայն անձնական ազատություն էին վայելում, այլև իրենց հողամասերին տիրում էին սեփականատիրական իրավունքով։ Հասարակության ամենաստորին դասերը՝ պառիկոսները և ստրուկները, չէին ճանաչվում որպես իրավունքի սուբյեկտներ, այլ դիտվում էին որպես իրավունքի օբյեկտներ։ Չքավոր գյուղացիների մեծ մասը պառիկոսներ էին, այլ խոսքով՝ ճորտ գյուղացիներ, որոնք որպես կանոն զուրկ էին տնտեսական միջոցներից և կրում էին ավատատիրական շահագործման հիմնական լուծը։

Ըստ Դատաստանագրքի, ստրկության աղբյուրներ են եղել. ա) գերեվարումը պատերազմում բ) ծնունդը ստրկից՝ տիրոջ տանը գ) դատարանի վճռով շինականի դատապարտումը՝ հանցագործություն կատարելու համար դ) առուծախը. ստրուկներին վաճառում և գնում էին որպես սովորական ապրանք ե) պարտապանի անվճարունակությունը, որը նրան ստրուկ էր դարձնում մինչև փրկագնումը[31]։

Ինչպես նշեցինք, ստրուկը չէր համարվում իրավահարաբերության սուբյեկտ, այդ իսկ պատճառով նա չէր կարող ազատ մարդու ժառանգորդ լինել, եթե ստրկատերը դրա համար չէր տալիս իր համաձայնությունը։ Առանց նրանց համաձայնության չէր կարելի ստրուկին հոգևոր կոչում շնորհել։ Ոչ քրիստոնյա ստրուկը հավիտենական ստրուկ էր մնում։ Նա ազատագրվել կարող էր քրիստոնեական հավատ ընդունելու դեպքում միայն՝ տիրոջը փրկագին վճարելու պայմանով[32]։

---

29 Նույն տեղում, էջ 82։

30 Նույն տեղում, էջ 70—71։

31 Նույն տեղում, էջ 132—134։

32 Ընդհանրապես պետք է նշել, որ ստրկությունը բավական տարածված երևույթ էր Կիլիկյան հայկական թագավորությունում։ Կիլիկիան հատկապես XIII դ. կեսերին համարվում էր ստրուկներ վաճառող չուկաներից մեկը։ Ստրուկներ-բերում էին տարբեր երկրներից, նրանց վաճառքով զբաղվում էին եվրոպացի և մահմեդական առևտրականները (տե՛ս Г. Г. Микаелян, История Киликийского государства, Ереван, 1952, с. 282)։

Այսպիսով, պարզորեն ուրվագծվում է Դատաստանագրքի դասակարգային էությունը, որտեղ օրինականացվել են ավատատիրական դասային կառուցվածքը, ունևորների և ընչազուրկների տնտեսական և իրավական անհավասարությունը։

Ուշագրավ են Սմբատի հայացքները իրավունքի և օրենսդրության նպատակի, օրինականության, ամուսնաընտանեկան, քրեաիրավական, աշխատանքի պաշտպանության, երեխաների կրթության, պատերազմի և խաղաղության հարցերի վերաբերյալ։ Ըստ նրա, իրավունքի նպատակն է ծառայել հասարակության բարօրությանը. «Եւ արդ ՝ղեցի զսա վասն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ եւ գոյանալոյ երկրի. և ապա վասն աշխարհական դատաւորաց եւ թագաւորաց»[33]։

Սմբատը ընդհանրապես տարբերում է իրավունքի հետևյալ տեսակները. ա) աստվածային, բ) աշխարհիկ (պետական), գ) եկեղեցական։ Օրենքների հիմքը՝ աստվածային իրավունքն է՝ տրված Մովսեսի, Ավետարանի, առաքյալների և եկեղեցու հայրերի միջոցով։ Աստվածային իրավունքը մշտնջենական և հավիտենական է։ Աշխարհական օրենքները, օժտված լինելով հարկադրանքի ուժով, պետք է դիմակայեն իրավախախտումները. «...դատաստանն բնաւ չունի քաւութիւն եւ ոչ խղճալ մեղանչականին... որ ի դատաստան ընկնի՝ նա տայ իրաւունքն դարձնել զուժն եւ ըմպել զբաժակն, զոր ինք ընկերին իմացոյց. հայնց ցասմամբ, զինչ այն ուժն արժենայ, զոր արել լինայ՝ նա իրաւունքն այն չափով տայ իր»[34]։

Եկեղեցական կանոնները կոչված են կարգավորելու ինչպես հոգևորականության վարքագիծն ու ապրելակերպը, ամուսնաընտանեկան հարաբերությունների մի մասը, այնպես էլ «բուժելու», ուղղելու այն հանցագործներին, որոնց վնասակար արարքները նվազ վտանգավոր են և որոնք մեղանչել կամ դղջացել են իրենց արարքի համար. «Կանոնք բերդ է, եւ երբ մեղանչական, իր բերնովն ասէ գիր մեղանքն՝ նա ապաշխարութեամբ քաւել տան, եւ զէգ ի բերդ մտաւ՝ նա փրկեցաւ ի մահուանէ... Ամ թէ զդղջայ ու յեկեղեցին դիմէ եւ ի կանոնքն՝ նա տան անուշութեամբ դարձնել զրկանքն ու քաւել զմեղանքն»[35]։

Խոսելով ամուսնաընտանեկան հարաբերություններում Սմբատի արծարծած առաջադիմական հայացքների մասին, պետք է նշել, որ նա ձգտել է ամուսնաընտանեկան իրավանորմերով ամրապնդել ընտանիքը, որը պետության և հասարակության կայունության և ամրապնդման կարևորագույն միջուկն է։ Հետևելով Սահակ Պարթևի կանոնախմբին[36], նա սահմանում է, որ ամուսնությունը պետք է տեղի ունենա որոշակի տարիքի հասած ամուսնացող զույգերի կամավոր համաձայնությամբ. «Կու հրամայէ աւրէնքս՝ պսակ որ տղայի լինի, որ քան զտասնուհինգ տարին պակաս լինի՝ նա չէ ընդունած այն պսակն. եւ երբ զիր հասակն առնու, որ ԺԵ տարին լինի՝ նա կարէ թողուլ զկինն ու ասել, թէ ես չունէի զիմ հասակն ու չգիտէի. ու է իրաւ։ Քահանայ՝ որ զայս այնէ որ անհասակաց պսակ այնէ, եւ կամ զայնոք որ ակամայ՝ առանց յիրար հաճելոյ հավնել են բռնադատութեամբ ազգացն՝ պսակէ՝ նա զկարգն կորսնէ»[37]։ Դեռ ավելին. Դատաստանագիրքը պաշտպանում է կնոջ պատիվն ու արժանապատվությունը և մեղադրում այն տղամարդկանց, որոնք առանց «իրաւանց» թողնում են իրենց կնոջը և ամուսնանում ուրիշի հետ, դրանով իսկ ոտնահարելով «ամուսնական պսակը»։ Նմանների նկատմամբ Սմբատը սահմանում է խիստ պատիժներ[38]։ Սմբատ Սպա-

33 Դատաստանագիրք, էջ 4։

34 Նույն տեղում, էջ 161—162։

35 Նույն տեղում։

36 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Ա, աշխատասիրությամբ՝ Վազգեն Հակոբյանի, Երևան, 1964, էջ 382։

37 Դատաստանագիրք, էջ 105։

38 Նույն տեղում, էջ 100։

բապետը գտնում է նաև, որ եթե նույնիսկ տղամարդը կնոջը տեսնի անհավատարմության մեջ, ապա «...սպաննելն չէ հրամայած, այլ թողուլն»[39]։ Նա պաշտպանում է նաև խորթ, որը երեխաների շահերը. «Եւ թէ անհանգրստութիւն լինի ի յայրուկնաց մէջ, եւ վասն խորթերոյ լինի պատճառն՝ նա պատեհ է, որ թէ պոմնով չլինի շալկել այրիկն զխորթերն՝ ի մայր առնուլն նա տան զխորթերն ի յազգն, որ հանգչին»[40]։

Ընդհանրապես Սմբատ Սպարապետը մեծ ուշադրություն է դարձնում երեխաների պաշտպանության, դաստիարակության և կրթության հարցերին։ Դեռևս IV դ. հայ մտավորականությունը մտահոգվել և առաջ է քաշել երեխաների դաստիարակության և նրի ուսուցման անհրաժեշտությունը[41]։ Սմբատ Սպարապետը նույնպես շարունակել է իր նախնիների բարի գործը և հատուկ իրավանորմով ձգտել է արմատախիլ անել իր ժամանակաշրջանում լայն տարածում գտած ուսուցման հիմնական մեթոդը՝ ծեծը. «Եւ թէ յուսցնելն վարդապետ զաշակերտ քշտէ ու մեռնի, նա նոյնն սպաննաւղ է»[42]։ Ուրեմն, ուսուցման կամ դաստիարակության ժամանակ երեխային ծեծելը, որ մահ է առաջացնում, նույնպես մարդասպանություն է։

Սմբատ Սպարապետը դնում է նաև ձրի ուսուցման հարցը, որը նույնպես իր ժամանակաշրջանի համար առաջադիմական գաղափար էր, և այն բարձրացնում օրենքի աստիճանի. «Կու հրամայէ աւրէնքս, որ բնաւ վարդապետ վարձ չառնու վասն գրոց կարդալոյ կամ այլ գիտութեան եկեղեցոյ ուսմանց. իսկի չէ պատեհ վարձ առնուլ եւ ապա ուսուցանել»[43]։ Ավելին. նույն իրավանորմը պարտավորեցնում է եպիսկոպոսին՝ ուսուցման հետ մեկտեղ հոգ տանել որբ երեխաներին. «Ապա կու հրամայէ օրէնքս զորբերն եւ զտառապեալքն ստածել եւ խնամել եւ անուշացնել ի գործ որ շատք դիմեն ու գան ի ուսումն։ Եւ տայ եպիսկոպոսն ու կարաւղ վաներոյն հայրապետերն այնոնց կերակուր եւ հանդերձ. եւ թէ կարող լինին տէրքն տղայոց նա զհանդերձն մէն տան»[44]։

Քաղաքացիական-իրավական հարաբերություններում նույնպես Սմբատն արտահայտել է այնպիսի գաղափարներ, որոնք ուշադրության արժանի են։ Այսպես, Դատաստանագիրքը, ելնելով պարտապանների շահերից (այդպիսիները, որպես կանոն, հասարակության ընչազուրկ դասի ներկայացուցիչներից էին), սահմանափակում է գրավի ենթակա իրերի ցանկը. արգելվում էր պաշտատիրոջ մուտքը պարտապանի տուն, որը դիտվում էր որպես ուժի գործադրում և հակաօրինական արարք։ Գրավ կարելի էր վերցնել միայն դատարանի վճռով, այսինքն, օրինական ճանապարհով։ Գրավի ենթակա չէին աշխատանքի գործիքները և կյանքի համար անհրաժեշտ առարկաները. «Եթէ քեզ ոք պարտք պարտենայ՝ նա մի մտեր ի յիր տունն՝ որ ընդ ներքս ուր էր գրաւականն գրաւկնել. զի աւրէնքն զայնպիսի այնելիքն հանավորումն է համարել. քաւել թէ դարպսուն հրամանաւք եկ թէ դեռ ու մարդ այլ ուզես ի հետդ՝ նա պատեհ է... ամենևին լուծք եզանց չէ պատեհ գրաւկել, զի գոյացութեան եւ ապրնաց է պատճառք»[45]։

Ավատատիրական հասարակարգի պայմաններում նման իրավանորմի գոյությունը ավելի քան առաջադիմական էր։ Համենայն դեպս, այն որոշակի չափով պատնեշ էր կանգնում չափն անցած տերերի ոտնձգություններին և ամեն տեսակի շահագործմանը։

Հանցագործության՝ որպես իրավական հասկացության, ընդհանրացված բնորոշում չկա Սմբատի Դատաստանագրքում։ Այդպիսի բնորոշում չկա նաև

39 Նույն տեղում, էջ 93։

40 Նույն տեղում, էջ 91—92։

41 Տե՛ս Կանոնգիրք Հայոց, հ. Ա, էջ 373, 377 և այլն։

42 Դատաստանագիրք, էջ 32։

43 Նույն տեղում, էջ 76—77։

44 Նույն տեղում, էջ 77։

45 Նույն տեղում, էջ 116։

միջնադարյան ողջ իրավական հուշարձաններում։ Սակայն Դատաստանագրքի մի շարք նորմերում, մասնավորապես 190-րդ հոդվածում նշմարվում է այն միտքը, որ հանցագործներ չեն ծնվում, այլ հանցագործությունը մարդու ազատ կամքի դրսևորման ձևերից մեկն է, որի հետևանքով նա ոտնահարում է աստվածային և աշխարհական օրենքները և վնաս պատճառում ուրիշներին. «Եւ մեղանչելն կամաւք չէ քանց իրք, որ արհամարհէ ոք զԱստուծոյ հրամանն եւ զդատաւորացն ու զիրաւանացն ահն մոռնայ ու ի հետ ձգէ ի մտաց. եւ այնով ստէ իր ընկերոջն և խլէ եւ յափշտակէ ու վնասէ, եւ ապա յանկից ծնանի այլ մեծ չար, տուրտվութիւնք եւ սուտ երդմունք եւ այլ բազում չարիք»[46]։

Ըստ Դատաստանագրքի, հանցագործության սուբյեկտը մարդն է և այն էլ մեղսունակ և որոշակի տարիքի հասած[47]։ Որքան էլ ծանր լինեն հանցագործության հետևանքները, եթե հանցագործը անմեղսունակ է, ապա նա ազատվում է պատասխանատվությունից. «Եթէ ոք ընդ դիւահարութիւն ի ներս անխել եւ դիւոն միջնորդութեամբ մարդ սպաննէ՝ նա պատեհ է աղէկ ստուգել, որ վստահի հայնց է ու առանց ոխութեան՝ նա այն կանոնացն է հասել, եւ ոչ դատաստանի... նոյնպէս եւ ամէն իրք որ դիւական լինի ստոյգ՝ նա կանոնացն է գործ եւ ոչ դատաստանաց»[48]։ Սմբատը տարբերում է մեղսունակության հետևյալ ձևերը. «կամաւոր» (դիտավորություն), «ակամայ» (անզգուշություն) և «խառը»։ Մեղքի հիշյալ ձևերը Սմբատը բերում է սպանությունների կապակցությամբ։ Նա կամավոր է համարում այն սպանությունը, որում առկա է հանցագործի կամքը, դիտավորությունը, կանխամտածվածությունը։ «Ակամայ» կոչվող սպանության դեպքում չկա դիտավորություն, սպանությունը տեղի է ունեցել անկախ նրա կամքից (պատահականության կամ անզգուշության հետևանքով)։ «Խառը» մեղքով կատարված սպանությունները իրենց մեջ պարունակում են և՛ դիտավորություն, և՛ անզգուշության տարրեր։ Այդ մասին են վկայում Դատաստանագրքի մի շարք հոդվածներ, մասնավորապես 180, 181, 182 և այլն։ Այսպես, օրինակ, անզգույշ սպանություն է համարվում հետևյալը. «Եւ թէ մարդ փայտ կենայ ու կոտրէ, նա փրթի կացինն ու դիպի եւ մարդ սպաննէ. եւ թէ փայտ կամ քար գլէ, նա գայ դիպի ու սպաննէ»[49]։ Իսկ «կամաւորն այն է, որ տայ բրով եւ զմէկայլն ի վայր դնէ ու սպաննէ, կամ քարով քշտէ, նա այն հայնց է զէդ երր թրով էզարկ ու էսպան»[50] և այլն։

Սմբատ Սպարապետը առաջ է քաշել այն գաղափարը, որ անձը պետք է պատասխանատվության ենթարկվի միայն իր կատարած արարքի համար, որի մեջ նա մեղադրվում է, այսինքն՝ Դատաստանագրքում Սմբատը իրավական ձևակերպում է տվել քրեական իրավունքի կարևորագույն սկզբունքներից մեկին՝ պատժի և պատասխանատվության անհատականացման սկզբունքին։ Այն ուղղված էր հին և միջին դարերում լայն տարածում գտած օբյեկտիվ ֆիզիկական մեղսայնացման ինստիտուտի դեմ, երբ պատասխանատվության նախապայմանը համարվում էր վնաս պատճառելու կամ կատարված հանցավոր արարքի սոսկ փաստը։ Չընդունելով օբյեկտիվ մեղսայնացման ինստիտուտը, Սմբատ Սպարապետը ընդունում և զարգացնում է այն միտքը, որ քրեական պատասխանատվության հիմքում պետք է ընկած լինի անհատական մեղքը։ Պատիժը պետք է կիրառվի հանցագործության մեջ մեղադրվող անձի նկատմամբ՝ սուբյեկտիվ մեղսայնացման սկզբունքին

---

46 Նույն տեղում, էջ 162։

47 Տեղին է նշել, որ միջնադարյան իրավական հուշարձաններում, որպես կանոն, հանցագործության սուբյեկտներ են համարվել նաև կենդանիները, նույնիսկ առարկաները (տե՛ս Курс советского уголовного права, часть общая, т. I, Л., 1978, с. 395).

48 Դատաստանագիրք, էջ 166։

49 Նույն տեղում, էջ 154։

50 Նույն տեղում, էջ 155։

համաձայն։ Առաջնորդվելով այդ սկզբունքով, Սմբատը սահմանում է, որ հայրը չպետք է քրեական պատասխանատվության ենթարկվի իր որդու կատարած հանցավոր արարքի համար և, ընդհակառակը, որդին ենթակա չէ պատասխանատվության ու պատժի՝ հոր հանցագործության համար. «...եթէ որդի՝ որ աւրինաւք ի մահապարտութիւն ընկնի, նա հայրն ի յայն չէ պատեհ, որ բռնվի, եւ ոչ եղբայր վասն եղբաւր. հայնց որ, դեռ թէ հայրն կամենայ զինք պատրան տալ որդւոյն ի մեղանքն՝ նա չէ պատեհ առնուլ, ապա դատաստանս հրաման տայ՝ որ զամէն մարդ իր գլխովն սպաննեն»[51]։ Բերենք մի օրինակ ևս. «Թէ իշխան կամ այլ ոք՝ որ ի թագաւորի ծառութիւն եւ ի հնազանդութիւն լինի, եւ իրք պատճառ այնէ թագաւորին, հայնց որ մեռնի իրաւնաւք, նա եղբարքն եւ որդիքն՝ որ յառաջագոյն լեալ լինին՝ նա վասն հաւր մեղացն չլինին զրկածք ի հայրենեացն ի ժառանգութենէ»[52]։

Ճիշտ է, վերոհիշյալ իրավանորմերում պահպանվում է պատժի անհատականության սկզբունքը, սակայն, նորմերի հետագա շարադրանքում Սմբատը մեկ քայլ հետ է նահանջում դրանից և ազդարարում. «...բայց որդիքն ի հաւր մահապարտութիւնն բռնվին՝ այնոնք, որ յետ անհաւատութեանն են ծնած, նոյնպէս եւ կինն. ապա այնոք որ յառջեւ լինին ծնած՝ ազատ են, մահ չպարտին, եւ կան համարձակութեամբ»[53]։ Սակայն այստեղ պետք է նկատել, որ հոր հանցագործությունից հետո ծնված որդիները և կինը, եթե ենթարկվում են պատասխանատվության հոր հանցանքի համար, ապա նրանց նկատմամբ շատ ավելի նվազ խստության պատժատեսակ է սահմանված, քան հանցավոր հոր համար։ Այդուհանդերձ, ըստ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի, հստակ դրսևորվում է այն միտումը, որ պատասխանատվության պետք է ենթարկվի նա, ով իսկապես մեղավոր է կատարված հանցանքի մեջ։

Պատիժը նշանակելիս, պետք է հաշվի առնել նաև հանցագործի տարիքը, հանցանքի շարժառիթները, միտումները, բարոյահոգեբանական վերաբերմունքը կատարած արարքի նկատմամբ[54]։ Պատժաչափը պետք է համապատասխանի կատարված հանցանքի վտանգավորության աստիճանին։ Այսպես, խոսելով հրդեհից առաջացած վնասի հատուցման չափի մասին, Սմբատը սահմանում է. «...եւ թէ կամաւք էր ու վասն չարութեան՝ նա զվզեն վճարէ ու կամ զինքն այրեն. եւ թէ յոչ կամաց՝ ի հեռուէ բերէ հողմն՝ նա զկէսն, եւ թէ ի մաւտէ՝ նա միատակ վճարէ։ Եւ յայսոր վերայ՝ զինչ որ տեսնուն զբանն որ լեալ լինայ, նա այնոր վերայ այնեն զիրաւունքն»[55]։

Սմբատ Սպարապետը առաջ է քաշել նաև անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը, որի դեպքում նույնպես անձը չի ենթարկվում քրեական պատասխանատվության։ Այսպես, Դատաստանագրքի ՃԿԳ հոդվածն ազդարարում է, որ եթե անձը գործել է անհրաժեշտ պաշտպանության սահմաններում և որի ընթացքում սպանել է գողին կամ ավազակին, ապա ոչ միայն չպիտի ենթարկվի պատասխանատվության, այլև նրա արարքը գովասանքի է արժանի. «Կու հրամայէ աւրէնքս, որ թէ ոք կենայ ու երթայ իր ճամբովն, եւ այլք կենան ու պահեն զճանապարհն որ սպաննութիւն այնեն կամ գողութիւն, ու այն հալալ գնացաւղն յաջող լինայ ու գնոքա սպաննէ՝ նա չէ արեան պարտական, այլ գովելոյ եւ աւժիթք տալոյ է արժան... բայց կարգ չկայ՝ որ քաշէ, եւ ոչ տուգանք ի դարպասն՝ վասն սպաննութեանն»[55]։

Ինչպես Մխիթար Գոշի, այնպես էլ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի քրեաիրավական նորմերը կրում են դասակարգային բնույթ, և այդ

---

51 Նույն տեղում, էջ 115։
52 Նույն տեղում, էջ 15։
53 Նույն տեղում, էջ 115։
54 Նույն տեղում, էջ 157։
55 Նույն տեղում, էջ 135։
56 Նույն տեղում, էջ 142—143։

տեսակետից պատժի հիմնական նպատակն է ավատատիրական իրավակարգի ամրապնդումն ու պաշտպանությունը ամեն տեսակ ոտնձգություններից։ Սակայն, պատժական քաղաքականության այս հիմնական նպատակից բացի, մեր մտածողները կարծում էին, որ պատիժը պետք է հետապնդի նաև մարդկանց ուղղելու, վերադաստիարակելու նպատակ։ Այս իմաստով, Սմբատ Սպարապետը, որպես կանոն, դեմ էր պատիժ-հատուցման Թալիոնի սկզբունքին, որը, ինչպես հայտնի է, իր արտահայտությունն է գտել մովսիսական օրենսդրությունում և միջնադարյան իրավական մի շարք հուշարձաններում։ Սմբատ Սպարապետը, որպես ավատատիրական իրավակարգի պետական խոշոր գործիչ և գաղափարախոս, կանգնած էր ավատատիրական օրինականության պահպանման դիրքերում։ Արդարադատությունը, ըստ Սմբատի, պետք է իրականացվի օրենքի և օրինականության հիման վրա։ Օրինականությունը պետք է պահպանվի բոլորի կողմից, այդ թվում նաև թագավորի։ Երկրի գերագույն կառավարիչը պարտավոր է անաչառ դատավարություն իրականացնել և, ընդհանրապես, վերահսկել արդարադատությանը, որպեսզի այն լինի անկաշառ և օրինական. «...պարտի թագաւորն զիր իրաւունքն տանել ըղորդ, անաշառութեամբ եւ առանց կաշառոյ եւ առանց ծուլութեան. եւ զամենայն զրկելոցն եւ զգանգատուորացն դարպաս բռնէ եւ իրաւունք այնէ»[57]։ Այդ իսկ պատճառով նա ցավով է նշում դատավորների կաշառակերությունը և պահանջում այդպիսիների նկատմամբ խիստ պատիժներ. «Կու հրամայէ աւրէնքս եւ առաքելական իրաւունքս, որ թէ եկեղեցական դատաւոր եւ թէ աշխարհական լինի՝ ու ճշմարտի ի վերայն որ թէ՝ դԱստուծոյ իրաւունսն կաշառոց կու ծախէ, նա ձգեն զինք ի դատաւորական աթոռոյն և զէդ աստուածածախ տուժեն. զի զԱստուծոյ իրաւունս ծախեց Յուդայի պէս»[58]։

Կանգնած լինելով ավատատիրական օրինականության դիրքերում, Սմբատը որոշակիորեն պաշտպանում է նաև ընչազուրկ դասի տարրական իրավունքները. «Եւ այլ կու հրամայէ աւրէնքս որ թէ մարդ ուժ այնէ տառպել՝ մարդոյ, եւ զիր վարձն ի յիր պոմանն չվճարէ՝ կամ կտրէ, ու գայ դատրստնի տառպելն, նա դարպասն վճարել տայ, եւ հանչաք մի այլ տուգանք ի դարպասն տայ»[59]։ Նա սահմանում է նաև հարկերի ու տուրքերի կայուն ու որոշակի չափ, որը ենթակա չէ փոփոխման առանց թագավորի իմացության։ «Զգաւառաց հարկն սահմանովն որ սահմանած է՝ առնուն պարոնայք. եւ չիշխէ ոք՝ յայն որ առանց թագաւորին դիր յաւելցնէ», բայց՝ «Եւ թագաւորն պարտի որ պահէ զաղքատն»[60]։ Դեռ ավելին, այն թագավորները, որոնք անազնիվ են և անկարող երկիրը կառավարելու, ենթակա են գահընկեց լինելու. «...զայն ոք (թագավորը—Գ. Ս.) որ մարգիկք դնեն, նա՝ թէ հայնց պիղծ լինին, որ չկարէ հանդուրժել աշխարհն, նա այլվայ իրենք եկեղեցովն եւ ամէն բնակչաք երկրին կարեն աքսորել»[61]։

Սմբատը հայ իրավաքաղաքական առաջադիմական ավանդույթներին համաձայն է գնահատում նաև պատերազմի և խաղաղության հարցերը։ Նա աննպատակ, անարդարացի պատերազմների կրքոտ հակառակորդ էր. «Կու հրամայէ աւրէնքս, որ թէ ոք ի քրիստոնէից ի յիր ընկերոջ երկիր յիշվէ ու ծեծ այնէ, նա մահու կորուստ բերէ՝ բարհակ անաւրինաւք՝ նա նզոված է»[62]։ Այդպիսի պատերազմների հրահրիչներին ու կազմակերպիչներին պահանջում է խիստ պատասխանատվության ենթարկել. «Եւ ի կռիւ ուր թագաւորն արդի՝ նա երբ սուրն վերնա՝ նա չէ պատեհ այլ մարդ սպաննել.

57 Նույն տեղում, էջ 9։
58 Նույն տեղում, էջ 20։
59 Նույն տեղում, էջ 145—146։
60 Նույն տեղում, էջ 13։
61 Նույն տեղում, էջ 81։
62 Նույն տեղում, էջ 149։

քաւէ, թէ հայնց մարգիք լինին յայլազգեացն, որ այն շմորոյն պատճառ լինին լեալ»[63]։ Սմբատը խաղաղության և ժողովուրդների բարիդրացիական հարաբերությունների կողմնակից էր։ Այդ է վկայում նաև նրա դիվանագիտական առաքելությունը, երբ նրա անմիջական բանակցությունների շնորհիվ հնարավոր դարձավ հայ-մոնղոլական դաշինքի կնքումը[64]։ Նա մտահոգված էր հայրենիքի սահմանների պաշտպանությամբ. «Այլ կու հրամայէ Մովսէս՝ թէ մի խլէր զհնոց սահմանաց սինաւոն քու սինաւոկցելոյն, բայց քո ըղորդութեամբ պահէ զղորդ իրաւնաւք. հայնց որ թէ խլած լինի՝ նա իրաւնաւք դարձնէ ու առնու, եւ ոչ ուժով. եւ թէ ոչ, նա տուժվի ի դարպսէ եւ յիրաւանց»[65]։ Եվ մինչև իր կյանքի վերջը նշանավոր զորավարն ու դիվանագետը, պատմիչը, օրենսգետը և օրենսդիրը հավատարիմ մնաց իր պատգամին. արդեն ալեհեր ծերունի՝ սուրը ձեռքին ընկավ հայրենիքի պաշտպանության համար։

Այսպիսով, Սմբատ Սպարապետը իր Դատաստանագրքով, նախ, ամրապնդել և օրինականացրել է ավատատիրական շահագործումն ու իրավակարգը։ Երկրորդ, ձգտել է իր սահմանած իրավանորմերով որոշակի կայուն մակարդակի վրա պահել հասարակական հարաբերությունները և մեղմացնել դասակարգային սուր բախումները։ Երրորդ, կանգնած լինելով ֆեոդալական օրինականության դիրքերում, ցանկացել է սանձահարել ավատատերերի կամայականությունները և, միևնույն ժամանակ, խրատել ստորիններին, որպեսզի վերջիններս հլու-հնազանդ ծառայեն իրենց տերերին։ Այսքանը հետապնդում էր միայն մեկ նպատակ՝ կայուն և անսասան պահել ավատատիրական հասարակարգը։

ПОЛИТИКО-ПРАВОВЫЕ ВЗГЛЯДЫ СМБАТА СПАРАПЕТА

Г. Г. САФАРЯН

Резюме

Смбат Спарапет является одним из крупнейших мыслителей в политико-правовой мысли XIII века. Политико-правовые воззрения Смбата отражены в его знаменитом «Судебнике» и «Летописи». Он дает божественную трактовку происхождения государства и царской власти: «царствование установлено богом, а (царь) считается наместником бога на земле». Смбат выступает за централизованную монархию, в которой церковь подчинена государству. Царь является верховным правителем и носителем суверенной власти. Являясь сторонником монархической формы правления, Смбат не возводил царя в степень «восточных деспотов». Облеченность верховной властью делала царя в действительности «первым среди равных». В политическом учении Смбата уделено много внимания также и проблемам права и законодательства. Он различает следующие виды законов: божественный, светский и церковный (каноны). Цель права, по мнению Смбата—общее благо общества. Весьма интересны и прогрессивны взгляды Смбата, отраженные в правовых нормах, регулировавших брачно-семейные, гражданские, угловные, трудовые отношения, в вопросах правосудия и законности, войны и мира.

---

63 Նույն տեղում, էջ 9։

64 Այս մասին տե՛ս Ա. Գալստյան, Մոնղոլական շրջանի հայ դիվանագիտության պատմությունից, Լենինական, 1945, Ա. Սուքիասյան, Սմբատ Սպարապետ (Հայ մշակույթի նշանավոր գործիչները, V—XVIII դարեր, Երևան, 1976, էջ 314—320)։

65 Դատաստանագիրք, էջ 149—150։

THE POLITICAL AND LEGAL VIEWS OF SUMBAT SPARAPET

SAFARIAH G. H.

S u m m a r y

Sumbat Sparapet is one of the major politico-juridical thinkers of his time. His politico-juridical views are expressed in „Taregirk" (almanach) and in „Datastanagirk" (Code of Law). Sumbat has explained the rise of the State and Royal Power through the grace of God.

He is in favour of the monarchical system of State rule where the church is subserviant to the State. Accepting however the strongly centralized system of monarchical power, Sumbat does not raise the king to the height of eastern despotism, but he considers the king the first of feudal lords. Sumbat attaches great significance to matters of right and legislation. He differentiates the following types of rights—divine, wordly and spiritual (canonical). The aim of right is the general welfare of society. Sumbat has propagated very interesting and progressive ideas regarding marriage, family, civil, criminal and labour norms, legality and justice, war and peace.